ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «20» հունվարի, 2021 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 04-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 20-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի նախագահի 2019 թվականի հունիսի 18-ի «Մրցութային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 20-Ա/Ք հրամանի Հավելված N 1-ով հաստատված մրցութային հանձնաժողովի անհատական կազմում կատարել հետևյալ փոփոխությունները.

- «Մկրտումյան Մելսիկ - ՀՊՄՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի պրոֆեսոր» բառերը փոխարինել «Վերմիշյան Հարություն - ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչ» բառերով,
- «Պողոսյան Գեորգի - ԵՊՀ Ակադեմիկոս Ա.Սիսակյանի անվան հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոնի տնօրեն» բառերը փոխարինել «Զաքարյան Հայկ - ԵՊՀ գիտաշխատող» բառերով:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ